

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»  
ՆԱԽԱԿ ԿԱՐ ՈՒՆԷ ԹՂԲԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԵ Է ՈՒՂԱԿԱՆ ՍՈՒՆ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ լրագրի  
ԳԱՀԻՐԷ

# ՆՈՐ ՕՐ

ԲԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ	
Գրք. 07.2	
Գ. անիւրէի համար	սարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան 60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան . . . . .	Յրանց 18
Վեցամսեայ . . . . .	» 10
ԲՈՒՍՈՅ ԵՒ ԿՈՎՍՈՅ ՀԱՄԱՐ	
Տարեկան . . . . .	բութի 7
Վեցամսեայ . . . . .	» 4
ԲԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԲՂԲԱԿՑՈՒԹԻՒՆ	
Թեքին վարչութեան վրայ է	

Direction du journal  
NOR-OR  
Caire  
Չեռագրիներն ետ չեն գործարար,  
ԱՐՏՈՒՄՆԵՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

Լ Ր Ա Գ Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՆԱԹ ՕՐԵՐԸ

ՇՄԲԱԹ ԴԵԿՏ. 2/15 ԲԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ Ա. ՏԱՐԻ ԹԻ 55

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԻՈՑՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ  
ՍԿՍԵԱԿ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԿԵՒԻՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՑԱՅՈՒ-  
ՑԻՉ ՏԻՍԱ ՍՄԲԱՏ ՓԱՓՈՉՅԱՆԻ ՍՏՈՐ-  
ԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի  
ԸՆԿԱՎԱԳԻՐՆԵՐԸ ԱՆՎԱԿԵՐ ԿԸ ՆԿԱՏ-  
ՈՒԻՆ:

### ՉԻ ՅՈՒՍԱՀԱՏԻՆՔ

Պ, Գրուկէր երբ փարից Հասաւ ժո-  
ղովրդային անասան համալիրութեան  
ցոյցեր եղան. առաջուց յայտնի էր որ  
Եւրոպական կառավարութիւնները ցոր-  
չափ ձայն չը բարձրացնէին ի նպաստ  
Պօէրիներու, ցորչափ Եւրոպական գահ-  
լիճները պաշտօնական գործառնու-  
թիւններով ձեռք չը կարկատէին ծե-  
րունի նախագահին, ժողովրդական  
գոռ ու գոչումէն ունէ գործնական  
արդիւնք մը չը պիտի կրնար յառաջ  
գալ:

Արդարեւ Պ. Գրուկէր գեռ Փարի-  
զէն չը մեկնած՝ երբ կը պատրաստու-  
էր այցելելու Օտար երկիրներու բոլոր  
Պետերը՝ հեռագրիներ իրեն գուժե-  
ցին Ուստիայէն, Գերմանիայէն, Աւս-  
տրիայէն, Իտալիայէն թէ անոնց և  
ոչ մէկը չը պիտի կրնար միջնորդել  
Անկլո-Պօէր վէճին:

Պ. Գրուկէր այդ հեռագրիները ըս-  
տանալուն պէս իր ճամբորդութեան  
ուղեցոյցը ստիպուեցաւ փոխել, և այս  
կերպով ծերունի նախագահին վիճե-  
նա, Պեռլին, Ս. Բեթրպոլի, Հռոմ  
ընելիք այցելութիւնները ետ մնացին:

Այդ միջոցին Հոլանտայի երիտա-  
սարգ թագուհւոյն Ուիլհելմին նշանա-  
խօսութիւնը կատարուած՝ և շնորհալի  
Թագուհին իր սրտին սիրած ամուսին մը  
ընտրած ըլլալուն անհունապէս երջա-  
նիկ, վսեմ գործ մը կատարել կուզէր  
իր կեանքին մէջ. միթէ յանուն նը-  
ուսանեալ և բռնաբարեալներու ազա-  
տութեան ձայն բարձրացնելէ աւելի  
քաղցր և ազնիւ գործ մը կրնայ ըլլալ  
աշխարհի մէջ:

Առիթը ներկայացած էր Թագուհ-  
ւոյն համար. Գրուկէրի նման ծերունի  
և անվեհեր նախագահ մը երկրէ եր-

կիւ կը պատէր իւր ազգին անկախու-  
թիւնը ձեռք ձգելու համար, թագա-  
ւորներու պէտերու օգնութիւնը կը հայ-  
ցէր սրտնք կը ղյանային իրենց շահուն  
հակառակ ըլլալուն համար:

Ուիլհելմին երիտասարգ Թագուհին  
նետուեցաւ և որոշեց գիմում ընել  
Գերմանիոյ կայսեր, և Անգլիոյ Թագուհ-  
ւոյն՝ յուսալով որ իր միջնորդութիւնը  
պիտի կրնար յեղաշրջել իրաց անտար-  
բեր վիճակը. ի՞նչ գ. ժաղաղութիւն,  
նոյն իսկ Թագուհւոյն իշխանութեան  
ներքէ գտնուող դահլիճը, հոլանտա-  
կան նախարարութիւնը պաշտօնապէս  
տե. եկացոյց Պ. Գրուկէրի թէ՛ ցորչափ  
օտար մեծ պետութիւններէ մին նա-  
խաձեռնութիւն չընէր միջնորդելու  
Անկլո-Պօէր վէճին, Հոլանտական կա-  
ռավարութիւնը բան մը չը պիտի կրնար  
ընել. այս լուրը մեզ բերողը Ռէօֆէրի  
գործակալութեան 12 թուականա հա-  
ղորդած հեռագրին էր:

Ի՞նչու զարմանանք այս լուրերուն. ա-  
ստիք տարօրինակ լը. բեր չեն համար-  
ուիր, քանի որ առաջին անգամ չէ որ  
Եւրոպական դահլիճները այս անգոր-  
ծութեան կը դատապարտուին և ի-  
րենց ապիկարութիւնը կարճաժամ  
պաշտօնական սեպերու և թուղթե-  
րու մէջ. քանից փորձով սեպնուած է  
որ Եւրոպական կառավարութիւնները  
խստիւ կը զգուշանան այս կարգի կըն-  
ճօտ խնդիրներու խորունկ մտնել  
և պրոպոնելու, (տաճկական առածը  
անշուտ հոս ալ կրնայ յարմարիլ)  
վախնալով որ մի գուցէ ստիկէ ազտ մը  
յառաջ գայ և ասով աշխարհի խա-  
ղաղութիւնը վրդովի:

Եթէ կարելի ըլլար Եւրոպական դահ-  
լիճներուն՝ Պետութեանց շահերը մե-  
կզմեկու հետ հաշտեցնել, ո՞րքան եր-  
ջանիկ օր պիտի ըլլար Պօէրին, Հայ-  
ուն, վերջապէս ասոնց նման բռնաբար-  
եալ և նուսանեալ ազգերու համար,  
սրտնց կորուսեալ իրաւունքը մէկ օր-  
ուան մէջ իրենց վերագործած, և այդ  
ապիկար դահլիճները մէջ մէկ գործօն  
դահլիճներու վերածուած պիտի սեպ-  
նէինք:

Բայց թո՞ղ չի յուսահատին ատոնք,  
ոչ Պօէրը և ոչ Հայը:

Յուսահատութեան մէջտեղ յաճախ  
յոյսը օգնութեան կը հասնի և կը  
փրկէ յուսահատը:

Գանի քանի յուսահատներ յուսոյ  
փորձիկ նշոյլ մը տեսնելով խրախուս-  
ուած ու վերակենդանացած են. թէ-  
պէտե քանի յուսացողներ ալ յուսախափ  
գտնուած ու անակնկալ յուսահատու-  
թեան մասնուելով թաղուած են:

Վերջապէս մարդուն կեանքը պա-  
տերազմի դաշտ մըն է ուր յոյս և յու-  
սահատութիւն կը կռուին ճակատ առ  
ճակատ, մերթ մին կը յաղթէ մերթ  
միւսը, քանի մը անգամ յոյս և յուսա-  
հատութիւն կը յաղթեն ու կը յաղթուին  
մինչև որ իրենց մէջ մին վերջին յաղթա-  
նակը տանի:

Ո՞չ ապառնի ասով և չի յարմար  
մարդս աշխարհի մէջ:

Հիւանդը, աւելի յառաջ երթանք,  
թոքստիտոսորը իր մահամերձ վիճա-  
կին մէջ խկ կը դարմանուի, բժշկու-  
ելու յոյսով. Պօէրը թէպէտ անոր  
մինչև վերջին շունչը կը մարտնչի զօ-  
րաւորին դէմ, թերևս յաղթելու յուս-  
ով:

Հայը թէպէտ գերիշխան և ստրուկ  
կը յեղափոխի Թուրքին դէմ. Սուլ-  
թանին կազմակերպած բանակները,  
Գերմանիայէն գնած թնթանօթները  
և նորաձև հրացանները երբէք չեն  
վախցնէր Հայ յեղափոխականին աչ-  
քը, քանզի նա կը մարտնչի հայրենի-  
քի ազատութեան յուսով:

Եւ գիտե՛ք թէ իրենց անկախութիւ-  
նը չը կորսնցնելու և անձնատուր չըլ-  
լալու յոյսով մարտնչող ազգ մը թէ-  
պէտ ըլլայ անզոր, ո՞րքան սարսափ  
կազդէ իր թշնամի բանակին, թէպէտ  
ըլլայ սա զօրաւոր: Ո՞չ ապառնի վար-  
դանանց պատերազմին մէջ Հայ նա-  
հատակները ջարդեցին Պարսից հար-  
իւր հազարաւոր զօրքերը ահաւոր:

Ո՞չ ապառնի Թուսանվայի պատե-  
րազմին մէջ ալ նոյնը ըրին Պօէրները  
որոնք երեսուն հազար անգլիայի  
արեամբ լեցուցին պատերազմին դաշ-  
տը:

Այո, այս հրաշքները յոյսն է որ կը  
գործէ:

Հետևարար թող չը վճատին Գրու-  
կէրը, Պօէրը, Հայը. թող չը յուսա-  
հատին հիւանդը, պարտատէրը, անա-  
կացեալը. թող չը զայրանան նորընծայ  
և կամ ինքնակալ գրողները որ իրենց  
յօդուածները հրատարակագիրներու  
քաջալերութեան արժանացած չեն.

թող մարտնչի ստոնք օր մը չէ օր մը  
քաջալերանք գտնելու յուսով:

Այսքան բացատրութեանց վրայ կը  
յուսամ թէ չը պիտի վարմանաք եթէ  
ըսեմ ձեզ թէ երկու օր առաջ յու-  
սահատող Պ. Գրուկէրը, սրտն՝ Եւրո-  
պացի պետերուն և թագաւորներուն  
ոչ մէկը համարձակած էր օգնութիւն  
խորհելու, կը գտնէ իր ճանապարհին  
վրայ այսօր նեցուկ մը Ձուիցերիան՝  
որ փրանտական կառավարութեան թա-  
խանձանօք իր միջնորդութիւնը պիտի  
ընծայէ Թուսանվայի և Օրանի Հա-  
րաւ-Ափրիկեան վէճին արգար վախ-  
ճան մը ստացու համար:

Ահա ապիկ յոյս մը որ յուսահատու-  
թեան մեջ տեղ՝ եկաւ օգնելու յու-  
սահատին:

Բայց դարձեալ չը զարմանաք երբ  
երկու օր վերջը Եւրոպական թղթա-  
բերը և կամ Ռէօֆէրի գործակալու-  
թիւնը հաղորդէ ձեզ թէ՛ Ձուիցերի-  
ան ինչ ինչ պատճառներով իր միջնոր-  
դութիւնը ետ առած է, ինչպէս որ  
Ուիլհելմին թագուհւոյն հետ առաւ. բայց  
չըլլայ որ շուտ մը յուսահատիք:

Չէ մի որ քիչ մը առաջ ըսի թէ  
մարդուս կեանքը պատերազմի դաշտմըն  
է որ յոյս և յուսահատութիւն կը կռուին  
իրարու հետ, մինչև որ ասոնց մէջ մին  
իր վերջին յաղթանակը տանի:

Ուրեմն չը յուսահատիք:

### ԻՆՉՈՒ ԿԱՄՈՒՍՆԱՆԱՆ

(Շարունակութիւն)

Առ Օրիորդ Մ. Ս.

Չի կարծէք, Օրիորդ, թէ դրամի համար  
կարգադրներ մոռցայ յիշատակել նախորդ  
յօդուածիս մէջ. Ասոնց վրայ այնքան բան  
կայ ըսուելիք որ մասնաւոր յօդուածի մը  
նիւթ ընելու թոյլտուութիւնը պիտի խնդրեմ  
ձեռնէ, թոյլտուութիւն մը՝ որով բան մը  
չը փոխուիք, խօսքս կուտամ ձեզի:

«Գրատի ընտանիքն» վերջը «Գրամ-  
ատի ընտանիքն» առաջինը՝ Հայրիկ մը  
կրնար երեակայել, բայց վերջինը կրնայ  
իրակացնել ամեն հալ. . . Ուիլսոն նոյն լսկ  
եթէ փշարա վարտի մը չի հանդիպի:

Ինչպէս կը տեսնէք, գեղանի բարեկա-  
մուհիս, մեր մէջ տեղի ունեցած ամուսնու-  
թիւնները բնաւ չեն նմանիր այն ամուսնու-

Թիւններուն՝ որոնց նկարագրութիւնը ձեր բերնին ջուրը վազցնել կուտայ՝ երեք ֆրանք յիսուսնոց հաստրի մը էջերուն վրայ:

Երեքէք օրիորդ, եթէ իմ յոռետես սո- զերով կ'սպաննեմ ձեր մէջ ձեր խաւարնե- րու ամենէն վարդագոյնը և ամենէն թոյ- լատրելին ու ներքին ձեր օրինակահաս- քը բնութիւններուն:

Ինչ տղի կացութեան մէջ զրիք զիս, Ես կերակայեմ թէ այս յօգուածս կար- զալէ վերջ, նոզկանքի պէս բան մը պիտի զգար ամուսնութեան հանդէպ և յուսահաս շարժումով մը:

— Աս է եղբր, պիտի բացազանչէք ձեր ննջասենեակի առանձնութեան մէջ:

Թանձանքը ձերն է:

Ուզեցիք որ զրեմ առանց ձեր մտքն անցնելու թէ խղճամա գրագէտ մը պար- սաւոր է միշտ ճշմարտութիւնը մէջտեղ դնել և շիտակը զրուցել իր գրածին մէջ պայմանաւ որ գրածը . . . երեսուն և մէկ օրէն վճարելի պարտաւորահակ մը չըլլայ:

Չարածնի հետաքրքրութեամբ մը ուզեցիք վերահասու ըլլալ մէկ բարձի վրայ ծերանա- լու գաղտնիքին, և հիմայ որ մերկ, անողոր ճշմարտութիւնը ձեր առջև կը գնեմ կը զըջար այդ հարցումը ինձի բրած ըլլալուդ և գոնցէ պղտիկ ատելութիւն մըն ալ կը սնուցանէք ձեր կուրծքին տակ այս սողորը ստորագրու- զին նկատմամբ:

Մերկապարանոց ճշմարտութիւնները միշտ հաճելի չեն կրնար ըլլալ մերկապարանոց կիներուն պէս. գիտեմ ասիկայ, և ասա ինչու կը ներեմ ձեզի եթէ պտտիկ ոխ մըն ալ կը պահէք ինձի դէմ:

Աստիկն անգամը չէ որ այդպէս զէ վար- ճատր անտարբարութիւն մը ըսած ըն- լալուս համար:

Ասկէք քանի մը տարի առաջ, Օրթագեղ, պարահանդէսի մը մէջ, իր գեղեցկութեամբ նշանաւոր Տիկին Ն . . . իր սպաննող աչե- րուն և իմարեցնող ուսերուն ամբողջ հմայքը կը պտտեցնէր սրահին մէկ ծայրէն միւսը:

Ձի կրցայ ես զիս զոպել և միջոց մը իր բովը մտնեմարով հաւատացեալի մը երկիւ- զածութեամբ:

— Այս որբան աղւոր էք այս գիշեր, միջեցի ախանջն ի վար:

— Հայտե՛ գնայ՝ զե՛վզե՛կ:

Ասկէք աւելի գէշ կերպով վարձատրուած չէ ճշմարտաստութիւն մը:

Ասիկայ դաս մը եղած է ինձի և անկէց ի վեր ընթացք բոլորովին փոխած եմ:

Հիմայ եթէ տեղ մը, մահացու մեղքի մը պէս տղի կնկան մը հանդիպեմ, նոյն իսկ եթէ այդ կինը բերաններուն ամենէն մեծը, շրթներուն ամենէն լայնը, բիթերուն ամենէն խոշորը, աչքերուն ամենէն պղտիկը, հա- սակներուն ամենէն կարծր, ճակատներուն ամենէն նեղը, ձայներուն ամենէն հաստը և կուրծքերուն ամենէն տափակը ունենայ միևնոյն ատեն, հրնուանքով մը կը մտնեմամ և

— Ալ չեմ գիմանար կոր, կըսեմ իրեն:

— Որբան ազնիւ էք կը պատասխանէ ինձի և այդ առթիւ ցոյց կուտայ զեղնած, մաշուած շարքը իր ակուններուն որ բնաւ տարբերութիւն չունին ընդամենը ծախու առնուած հին դաշնակի մը թափթփած ստեղծարարի ոսկորէ մատներուն:

Գոնէ « ազնիւ էք » մը կըսէ մարդուս. այդ ալ բան մըն է:

Աւասիկ ինչու կը յանձնարարեմ ձեզի մեր արդի ամուսնութիւններու մէջ չի փըն- տուել ո՛չ « բոյր-հօգիներու » լծորդութիւնը,

ո՛չ իտէպի մը իրագործումը և ոչ իսկ ըստ- ուերը՝ ամենայնպէս բանաստեղծութեան:

Կրնայ պատահիլ որ — և ասիկայ չգիտի զարմացնէ զիս — նոյն իսկ գուր՝ հակառակ ձեր ստացած կրթութեան, հակառակ ձեր բարձր ձգտումներուն, հակառակ ձեր ար- տայայտած այնքան վեհա՛ն ազնիւ զգացում- ներուն, զուրջ ալ օրին մէկը, մէկ կողմ դը- նէք ձեր մտածելու մասնաւոր եղանակը, և զաղբիւրք ըլլալէ՛ ինչ որ եղած ըլլալ կը կար- ձելիք և ամեն հայ աղջիկներու նման, զուրջ ալ ձեր ձեռքը գնէք առաջին անգամ ձեր դէ- մը և լլուրին ափին մէջ և մեծ « այո » ն արտասանէք երբ ձեր սիրտը « ոչ » ըսել կը խրատէ ձեզի:

Գուր անշուշտ կ'երազէք ամուսին մը ձեզի՝ նման այն հերոսներուն որ ֆրանսական վիպասանութիւններու մէջ կը վիտան և ո- ռոնց պատմութիւնը այնքան անգամ հա- ուշներ խլած է ձեր շրթներէն և գուցէ արձունքներ ձեր աչքերէն:

Միտք, պաշտօղ, փափկանկատ ամուսին մը, ամուսին մը՝ գզող, ամեն զոհողու- թիւններու պատրաստ, կրկէ՛ մը աւելի յաւիտեական սիրող մը, ա՛ս չէ ախպարը ձեր փրոտած բնկերին:

Իտե՛զ աղջիկ:

Յ. ԱՓԻՄՐ (Շարունակելի)

ՅԱՂԸ ԵՒ ՊԱՐՍՎԱՅԱՅԵՐԸ

Պարսկաստանի կենանքին ծանօթ եղող- ներին քիչ շատ յայտնի է մեր այնտեղի կենանքը և անոր անհամար թանկութիւնը ուր կը կենան և կը պաշտպանուին միմիայն Արքայական Տան, բարձրատիճան խելացի պաշտօնեայնեքի ու նշանաւոր իտ- ների բարեացակամութիւնով, որպէս երկրին զարգացումի, լուսաւորութեան, վաճառակա- նութեան և յարաբերութիւնների դիւրութեան ամենայնպէս սարք. շատերն իրենց իսկ անձնական շահերի տեսակետով:

Մահաբազկան հասարակութիւնը, մանա- ւանդ Ատրպատականի Թուրքերը, ազէտ, կոշտ և մոլեռանդ, կը զսպուին միայն յիշեալ յայտնի ոյժերից:

Այսպէս, Շահի և պաշտօնական Պարս- կաստանի յարաբերութեան փոփոխութիւն- ները՝ այս ու այն տեսակետով կենական նշանակութիւն ունին այնտեղի մեր ազգա- յիների համար: Պարսկաստան իր կառա- վարութեան դէմ բարեացակամ նպատակներ չունի. կառավարութիւնն այդ մասին ապա- հով է և հանգիստ: Իսկ գաղով հայկական խնդրի մասին անոր հետեւելը ընթացքն, զա կապուած է բարեացակամ ուրոյն պայ- մանների և հոսանքների հետ:

Շահի կառավարութիւնը, հակառակ նոյն իսկ հայկական խնդրի նկատմամբ իրեն ունեցած համակրութեան, կառավարական շահերի իսկ պահանջումով որպէս ազգե- ցութիւնների ենթակայ իշխանութիւն մը, չէ կարող զօրազարար ուժեղ դիրք մը ստանձնել այդ խնդրի առթիւ: Եւ այսպէս ալ ակամայ հոն ապաւինող զաղթական հայութիւնը, ինչպէս և տեղացիք, կենթար- կուին երբեմն կամայական որոշումների և խտուրտների, մանաւանդ տանիկ սահ- մանագլխին մտեր, Սլամաստի, Խոլի և Ուրմիի գաւառները. և այդ հոն ոչ միայն օգտաշատ ձեռնարկութիւններ կը վտանգէ, այլ և կը սպառնայ տեղացի սակարարութիւն հայ ազգաբնակչութեանը:

Այս կրկնակ տեսակետներով ալ վեհ.

Շահի Պոլիս այցելութիւնը կը վախցուէր որ գէշ հետեւանքներ յառաջ բերէր Հայերի և պարսիկ կառավարութեան սերտ և հաւա- տարիմ յարաբերութիւններին միջև: Սուլ- թանն՝ երկու նպատակ ունէր և երկու ա- ռաւելութիւններ կը յուսար Ն. Վեհափա- աութեան այցելութիւնից. նախ ցուցնել թուրք ժողովուրդին իր քաղաքական և կրօնական գերակշռութիւնը պարսկական օգոստափա Շահնշահին վրայ և միանգա- մայն նախապաշարել նորա և իր պաշտօ- նեայնների միտքը Հայերին նկատմամբ:

Բարեբաղդաբար, հետեւանքները Թուր- քերի ամեն յիմար ձեռնարկութիւններին պէս՝ իրենց դէմ գարձան: Կրնանք սպասել որ թուրք ու պարսիկ յարաբերութիւններ Շահի այցելութիւնից առաջ եղածից եթէ ոչ գէշ, գոնէ աւելի աղէկ պիտի չը լինին: Սուլթանին արած այդ հոշակաւոր այցե- լութիւնից յետ, Շահին Վեհ. Հայրիկին արած ոչ պակաս նշանաւոր այցելութիւնը և Շիրի-Խուրշիդի ազամանգազարդ պա- ուանշանի սրբուրդը՝ բացարձակ ապտակ մը ու հետեւանք պատասխան մը եղաւ թուրքական մայրաքաղաքն իր այցելութեան իրեն վրայ թողած ապաւորութեան:

Նշանակելով այս ուրախաթիմ հանգա- մանքը, մեր նպատակն է այս առթիւ Պարս- կաստանի ազգեցիկ աղջկաններին տեղացի և զաղթական՝ մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրել կարենայ օգոտելու այս բարեյա- ղող պայմաններից՝ աւելի սերտ և ամուր հիման մը վրայ գնելու համար իրենց յա- բարեբերութիւններ դէպ ի պարսիկ բարեա- ցակամ կառավարութիւնը: Այդպիսով զօ- րացունել ոչ թէ կառավարութեան վրեժա- յարարութիւնը, որ իրենց հետեւանք լինելիք Պարսկաստանի համար մտածուած կրթական ծրագրերի զործադրու- թեան և իրենց այդ ապահով կացութեան խնդիրները, շանաւով ազատել անոնց, ըստ կարի, կեղեքիչ, շահամուլ և օտար ազգե- ցութիւններից զրդուող ստորին պաշտօնեայ- ների կամայականութիւններից:

Այս առթիւ կարևոր պարտականութիւն մ'ուն Ատրպատականի առաջնորդութեան և հոգևորականութեան վրայ կը ծանրանայ:

Յանկալի է որ հոն Հայեր գիտակցօրէն աւելի զօրեղ և ազգու գեր մը ստանան պարսիկ կառավարութեան և երկրին զօրե- ղացումի զօրծին մէջ: Մեր շահեր՝ մեզ զրացի կառավարութիւններին մէջ՝ միայն Պարսկաստանի զօրեղացումիցն է որ երկիւղ չունին և ընհակառակ կրնան նպատատուրել. պարզ խօսելով այլապէս, հայկական խնդրը պարսիկ կառավարութեան շահերին հետ այնքան զուգընթաց և հա- մաձայն է որ հպատակութեան զգացումից աւելի բարձր պարտականութիւն մը իսկ պիտի լինէր հոն անկեղծօրէն լնալ անոր գոյութեան զօրեղացումին, չի վճատելով աննպաստ պայմաններից, մանաւանդ այժմ, երբ աւելի քան երբեք փափուկ է պարսիկ կառավարութեան կացութիւնը:

Այդ կարգի շահեր եթէ չի կրնան ան- դամ զօրազարար Պարսկաստանի ապագան փրկել և գոնէ կարենան երկարաձգել, զա կը իր առանձին և մեծ օգուտներ ունի եր- կուստեք, հասկանալի պատճառներով:

Մի գիտէ թէ վաղը ինչքն պահած է զօրաւորին և սկարին համար:

Արմէնիա ՄԷՆ-ՍԷ

Ա. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՎԵՃՍՓՍՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆՔՈՐԴՈՒԹԻՒՆԸ

« Նովոստի » ուսու լրագիրն ասկէ առաջ գրած էր թէ վեհ. կաթողի- կոսը ճանրորդութիւն մը պիտի ընէ գէպի Ռուսիաի մայրաքաղաքները, այնտեղի բժիշկներին դարմանել տա- լու համար իր սկարութիւն:

Վերջին տեղեկութիւններին նայե- լով, այդ լուր անհիմ է. Ս. կաթո- ղիկոսը շատ առողջ է և Պետերբուրգ կամ Մոսկուա երթալու կարգադրու- թիւն չկայ, Հաւանական է որ Նորին Ս. Օծուրդը երթայ Թիֆլիս ան- ցունէ առաջիկայ ձմեռը:

— « Բանասէր » հնախօսական եռամ- սեայ հանդէսի խմբագիր՝ Տիար Կ. Բասմաչևան որ վերջերս Թիֆլիս կը գտնուէր, վեհ. կաթողիկոսի հրաւի- անօր Ս. Էլմիսիճին գնացեր է հնա- գիտական հետազօտութիւններ կատա- րելու համար:

— Իշխան Լուսինեան հրատարակած է « Իր նոր ֆրանսերէն-հայ. պատ- կերագրող բառարան » ին՝ առաջին հատորը A—H: Սոյն հատորը կը բաղկանայ 1060 էջերէ, և սկիզբը կայ հեղինակին պատկերը: Գին է 25 ֆրանք. նոյն գնով պիտի ծախուի և երկրորդ հատորը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Կ. Պուլէն կը հաղորդեն Նոյ. 28ին. « Քէնդըբի » ամերիկեան յածա- նալին Չմիւն գալը մեծ ապաւորու- թիւն ըրած է հոս. հաւանական է որ թիւրքիա կատարէ Միացեալ Նա- հանգների պահանջները:

Միւս կողմէ, կայսերական իրատէ մ'ըլած է Ամերիկէն յածանաւ մը գնելու որի գնին մէջ պիտի հաշուուի նաև այն 90,000 տոլարի գումարը որ Ամերիկացիները կը պահանջեն Հայաստանի խոտվութիւններին ժա- մանակ իրենց ունեցած փառանքներն իրքե հատուցում:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԻՒՊՏՈՍՈՒԹԻՒՆ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԷՋ

Ամերիկաի Միացեալ Նահանգների կառավարութիւնը յաջողեցաւ խար- բերդի մէջ հիւպատոսութիւն հաստա- տել որի պաշտօնավարութեան ար- տօնաթուղթը տալ կը մերժէր Բ. Գուրը:

Կերևի թէ « Քէնդըբի » մարտա- նաւի ճանբայ ենելը վերջապէս այդ գործի կարգադրութեան ալ մղում մը աուեր է:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Վանի մօտիկ Հէքեարի լեռնաբը- նակ նեստրական Ասորիներն որոնք 2 տարիէ ի վեր նոյն կողմերի իս- լամներին հետ զօտուած լինելով յաճախ ընդհարումներ կունենային, վերջերս հաշտուեր են, Ասորիներ

պատրիարք Մարշիմոնին և տեղական իշխանութիւններին միջև համաձայնութիւն գոյանալով : Տեղական իշխանութիւնները փութացրին և հետագրով Բ. Դրան աւետել այդ հաշտութիւնը : Մարշիմոնին ալ նոյն իմաստ հետագրով մը յայտնեց և իր ժողովրդի հաշտուած լինելը իսլամներին հետ :

ՉԻՆԱՍՏԱՆ

Այս պահուստ, լուրեր չկան Չինաստանէն, թերթերու լիզթակիցները կը գանգատին ու մըշտ «նոր բան մը չ'ունինք գրելիք» կ'ըսեն :

«Քուռուիէն տէլլա Սէրա» լրագրին Բէքի'ի թղթակիցը սովորական բանաձևեր կրկնելէ վերջ լի-ձունկ-Շանկի Տերութեանց ներկայացուցչներուն հետ ըրած մէկ տեսակցութիւնը կը համառօտէ, ինչ որ բաւական հետաքրքրական է, և զոր կ'արտասուէր հաս «Խորամանկ լիազօր Պաշտօնեան (Լի-ձունկ-Չանկ), կը գրէ յիշեալ թերթին թղթակիցը, կը պաշտպանէ իր երկիրը պնդելով որ՝ Չինաստան չ'կրնար այդքան խաղաղ գոմար մը տուգանք վճարել, կամ մէկու կէս միլիար սակի փոխառութիւն ընել Մաքսատանց վրայ հսկիչ միջազգային Յանձնախմբի մը երաշխաւորութեամբ : կը վախճայ որ մի գուցէ Եւրոպայիք Չինաստանի վրայ ձեռք դնեն, ու սա իր անկախութիւնը կորսնցունէ :

Լի-Չանկ-Չանկ կուզէ փոխառութիւնը սովորականին պէս ընել : այսինքն երաշխաւորել զայն աղի ներածութեան տուրքերով :

Կայսրը, կայսրուհին բանի չ'են խառնուիլ, կ'ըսէ :

Լիազօր իշխանը շատ կը խորհի Մանչուրիի և Լուն-Սիի մէջ սնցած դարձած իր վրայ : Կուզէ որ բանակցութիւնները շուտ մը սկսին : Բանակցութիւնները որչափ որ ուշանան, ոչնչափ կը կորսնցնենք, կ'ըսէ :

Դալով Կայսեր, Կայսրն ալ բանակցութիւնները ըննալէն վերջը Բէքի'ն պիտի վերագառնայ :



Լոնտոնէն Դեկտ. 11 թուականաբաշտուած հետագրի նայելով, Չինաստանի մէջ նոր խրատքներ երևան կ'եննեն :

Չինաստանի Հարաւային կողմը, կ'ըսէ հետագրիցը, ասպատակութիւններն ու ասպակութիւնները հետզհետէ կը շատանան, և հոն ճամբորդելը վտանգաւոր կը դառնայ այլ ևս :

Ոստիկան-պաշտօնեայնները չ'են կըրնայ անոնց առաջն առնուլ :

— Լասէյ էն Դեկտ. 11ին կը հետագրին թէ՛ Հոլլանտան Պ. Բրուկէրի տեղեկացուցած է որ Հասարակապետութեանց ի նպատտ բան մը չը պիտի կրնայ ընել, քանի որ տէրութիւնները նախաձեռնակ չ'են ըլլար :

— Պոլսը Պատերազմական Նախարարութիւնը քանի մ'ապաներ գրկած է Դերմանիա 3,000,000 Մօսէրեան փամփուշտներ գնելու համար :

Անձուխ վառօդն ու Մօսէրեան փամփուշտները շատ հետաքրքրեր են Սուլթանը և կուզէ որ անմիջական կերպով ստանի պատրաստելու համար մասնուոր գործարան մը շինուի :

Այս հաստատութեան սնորհէն կարգած է Հասիլ փաշան :

ՉՍՅՆ ՄԸ ՎԱՌՆԱԿՆ

Քառասուն օրան ցաւալի յայտարարեմք մը յետոյ՝ անցեալ օր միայն ձեռքս Լասա հետեւալ գրութիւնը, զոր նոյնութեամբ կարտասուեմ հոս, կրթասեր ընթերցողներու ուշադրութիւնը հրատարակով :



Վառնա, 30 հոկտեմբեր  
ԼՔէնտի,

Լրագրիներու միջոցաւ ձեր մարդասիրական գործերը կարգալով մեծ հրճուածք մը զգացի, որմէ խրատուած՝ համարձակութիւնը կունենամ ձանձրութիւն մը տալու ձեզի, յուսալով որ իր Բարիկորցի, հին և ազնիւ բարեկամ մը, չպիտի մերժէք խնդրանքս, որչափ որ կարելի է, մանաւանդ որ խնդրանքս բնաւ անձնականիս հետ անչալութիւն չունի :

Խնդրելով ձեր բարեգործութեան ճանրուն մէջն է, ձեր որբասիրական ձեռնարկին հետ սերտ կապակցութիւն ունեցող :

Խօսքս չերկարելու համար՝ համառօտակի բացատրեմ թէ ինչ :

Անշուշտ գիտէք, սիրելի՛ բարեկամ և հայրենակից, որ Պօղոսը և Հայաստանի կոտորածներուն հետեւանցով 1896 ին գաղթականներու հոսանք մ'ալ թափեցաւ Վառնա, թէ Պօղոսն և թէ գաւառներէն : հարկ չկայ ըսել թէ ինչ տառապանքներ կրեցին այս շուտաձեռն անգութ բաղդի ձեռքէն հալածուած փախստականները :

Պուլիարիոյ հողին վրայ ապաստանողներու շարքին մէջ կը գտնուէին նաև, ի միջի այլոց, ուսուցիչներ, իրենց ընտանիքով, զակիներով :

Եթէ հայ ուսուցիչ ըսել ինքնին խեղճութիւն ըսել է, հասցաւ անոր ինչ անուն ալ այն ահա՛նի աղէտներէն վերջ որ երկնային շահթերու նման թափեցան՝ բանիցս արդէն մարտիրոսացած հայութեան վրայ :

Անիծեալ աշխարհ . . .

Վերագառնամ իմ խնդրոն, որ սիրտս կը ճմլեցնէ՝ մանաւանդ այս տողերը գրած պահուստ :

Բնիկ Խասգիւզցի, 21 տարինեք է վեր ազգին զակներովը գրազող մէկ մը, ձիւլընան Պաղտիկ ԼՔէնտի ուսուցիչը, Խասգիւզի մէջ շարաչար կողոպտուելէ վերջ, անցեալ տարիներ միտ գաղթականներու հետ տեղս ապաստանեցաւ, ու օրիորդ Տրէյլըր երանաշնորհ անգլուհիի մարդասեր օժանդակութեամբ վարժարան մը բացաւ հոս տեղ, բոլոր մանչ ու աղջիկ աղքատ մանկոտիկներ զաստիարակելու գովելի կարգումով, իրեն ընկերակից ունենալով բանի մը մը ուսուցիչներ և վարժուհիներ :

Տարին չբոլորած՝ տեղէն կը մեկնի մեր բարեբարուհին, որ այսօր անգութ գերեզմանին մէջ պէտք է փնտռէ իր անասման բարեգործութեան փառապսակը, թողով որ հայ մանկոտին, լիուր շնորհապարտ, մանկական անմեղ գիտակցութեամբ որբայ կորուստը մահկանացուի մը, որուն անտարակոյս «enfant sublime» իգական մակերը պիտի տար Վիթթոր-Հիլիօ, եթէ ողջ ըլլար :

Մեծ, շատ մեծ դժբաղդութիւն մ'եզաւ այս խեղճ վարժապետին համար, իր ցաւը, իր անողբ յուսախաբութիւնը պահ մը մեղմացնելու ջերմ փափաքով, մենք ամենքս ալ ջանքեր չ'ենայեցինք վարժարանը բաց պահելու համար, ջանքեր՝ որոնց շնորհիւ

հինգերորդ տարեշրջանէն է գոր կը բոլորէ այսօր այս հաստատութիւնը, ուր էր յաճախեն նաև իմ երկու գաղթիկներ :

Բայց . . . ԼՔէնտի, հայ ժողովուրդին հետզհետէ ինչ պան կացութեան մատնուիլն ինձմէ լաւ գիտնալու էր : Ուստի, բնական հետեւութեամբ, հիմակ վարժարանը աննկարագրելիօրէն նիւթական անձկութեան մէջ է, մի գարմանաք ասոր վրայ, այնպէս որ խեղճ ձիւլընան ԼՔէնտին շատ գծուարաւ կրցաւ կատարել այս տարի վարժարանի վերարացումը : որ հիմակ 73է աւելի աշակերտներ ունի, 23 հատը բարձրօրէն ձրի : մնաց'ալ յիսուելը՝ երկու, երեք կամ չորս ֆրանք կը վճարէ ամիսը : Տարակոյս չունիմ որ, այսպիսի չնչին եկամտով կարելի չպիտի ըլլար կառավարել զարոց մը, որ տարին երեսուն սակի տան վարձք ունի, և շատանց գոցուած պիտի ըլլար ան, եթէ միայն՝ տարին մէկ անգամ թատերական ներկայացում մը չկազմակերպուէր անոր ի նպաստ :

Արդ . . . Ս. ԼՔէնտի, յանուն իմ և ամբողջ Գարագաշան ընտանիքին, յանուն Արարիկի՛ ուր անցուցիք ձեր մանկութեան օրերը, վերջապէս յանուն խումբ մը աղքատ կամ որբ աշակերտներու՝ կը խնդրեմ ձեռնէ, որ բարեհաճիք օգնութիւն մ'ընել այս խեղճ ու կարօտ զարոցին, որչափ որ կրնար : շատ բան չենք ուզեր, միայն սա անիծեալ ձեռք անցնենք . . . : Շատ և շատ երախտապարտ պիտի թողուք զիս ալ, աշկերտներն ալ, անօրէնն ալ : Խեղճ, խեղճ անօրէն :

Ողջ լերուք, եղն :

ՄԱՐՄԱ Պ. ԳՈՐԱԳՈՇԵԱՆ  
IV Putschiste, Վառնա :



Սիրայօժար, սիրելի՛ բարեկամ և հայրենակից : անձնական բտակով իսկ պիտի չը վարանէի կատարել սիրուն առաջարկ մը, որուն համար շնորհակալ եմ ձեզ : եթէ միայն . . . եթէ բարեբարութիւնը, կոյր վատահոլութիւնս ըսել կուզեմ, շարաչար գործածուած չըլլար խաչբոյս ու անպատիւ մարդիկներու կողմէ, որոնք այսօր անբարոյականութեան նողկալի շօյր մը կազմած են հրապարակին վրայ :

— Pauvre proletnaires !

պիտի գոչէր իմ մէջ Ֆրանսիսը Սառնէ : անտէր ազգի մը թշուա՛ն վարժապետներ :

Ամէն կողմէ յուսահատութեան աղիկտուր ճիչեր, ամէն կողմէ գթութեան աղիւսներ : Ինչ է այս, ո՞վ անողորմ երկին : դէպ ի ո՞ր պիտի առաջնորդես մեզի այսպէս : անցեալին արիւնոտ, ներխա՛նս՝ անարև, ապագայ մ'անստոյգ, աղօտ, մշուշապատ . . .

Բայց բարի հաստատեցաւ չվայրեր տըրտընջալ :

Յուսալ և ազօթիլ ուրեմն : անա ինչ որ կը մնայ ընել հայու՛ն : մինչե՛ք երբ, սակայն . . .

Եւ քանի որ որբասիրական ձեռնարկի մը համետ արդիւնքը արդէն յանձնուած է Որբասիրաց Ընկերութեան, որու ի նպաստ և անուան տակ գործուած է, իր փաշանեաներով, իր հարուստներով աշխարհածանօթ բարեբար մարգարալի մէջ չպիտի գրտնուի բարեբար մը, հոգեբու հետաձայն մը, որ օրհնեալ արձագանքը հանդիսանայ Վառնայի ձայնին :

« Սա ձեռք անցնենք » հոգեվարժի հանչիւնն է այս սրտածմիկ զգացողին համար : Չպիտի գտնուի, կըսեմ, գէթ մէկ անգամ ան համար, մեր ազնուականներու գառն սրտի տըր « Նոր-Օր » կարգացող մը :

Բարեբար յիշեցի : Յուզուած եմ : ինչպէ՛ս չեմ յիշած թէ զարեբով խուլ Սփինքսի մը ստորտը կը գրտնուի . . . : Ս. Օ.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԵՆՏՐԱԿԱՆ  
ՄՐՅՈՒՄԸ ԱՆԳԼՈՅ ԴԵՍ

(Շար. Յանտրոզ թիւէ՞ծ եւ վերջ)

Տակաւին Անգլիոյ մէջ լաւ մը ըմբռնուած չէ գերման վաճառականներուն ծաւալման չափը ու արժէքը : Ծայրազոյն Արեւելքի մէջ : Դեռ վերջերս գերմանական թերթի մը մէջ յօդուածազիր մը ցուցուց թէ արեւելեան Ասիոյ մէջ գործող գերման տուներու թիւը քիչ ժամանակուան մէջ բազմանալ սկսած է և որոնք թէև առաջ կը բաւականանային անգլիական ու Ֆրանսական ապրանքներ ծախելու միայն, այժմ՝ ուսումնասիրելէ վերջ իրենց գտնուած հրապարակներու առեւտրական անհրաժեշտ պայմանները, ըշելու վրայ են գերմանական ապրանքներ միայն, ոչ անշուշտ մըրած հայրենասիրական զգացումներէ (դի վաճառականութիւնը աղք ու հայրենիք չի ճանչնար) այլ որովհետև անտարակոյս կը տեսնեն թէ գերմանական ապրանքներէ աւելի գրամ կըրնան շահել : վերոյիշեալ յօդուածը կ'ըսէ մեզ նաև թէ մինչդեռ 1886ին Չինաստանի մէջ գտնուած գերման վաճառականներու թիւը 56 էր միայն, այժմ՝ բարձրացած է 92ի, և ճարտնի մէջ գտնուածներուն թիւը 38է բարձրացած է 57ի : 1889էն 1896 Գերմանիոյ ի Չինաստան արտածուելը 86, 32% թիւ բարձրացում մը ունեցած է, իսկ ճարտն զրկուած ապրանքները 92% թիւ յաւելում մը ունեցած են : Ծայրազոյն Արեւելքէ Գերմանիա եղած ներածման աճումը ալ աւելի կարևոր է : Չինաստանէն եկած ապրանքները հարիւրին 136,5, իսկ ճարտնէն և կաճեցրը հարիւրին 162,7 աւելցած են : Անգլիացիք կը միտնարուին մըրտածելով թէ Գերմանիոյ արտածման քանակը ի Չինաստան բազմապատումը իրենցին՝ մէկ վեցերորդն է, իսկ ի ճարտն՝ երկու եօթներորդը տակաւին : Սակայն հրատարակուած էն վերջի վիճակագրութիւնները կը հաստատեն թէ Գերմանիա ահագին արագութեամբ աւելցնելու վրայ է իր արտածումը յիշուալ երկիրներուն համար :

1889ին Գերմանիոյ ամբողջ ներածումն էր 200,755,000 ա. ո. (այն ապրանքները միայն որոնք Գերմանիոյ մէջ սպառած են) և գերման արտեւտարութեան արտածումը 158 Ե35,000 ա. ո. : 1896ին այդ ներածումը բարձրացաւ 224,433,350 ա. ո. ի, իսկ արտածումը 176,030,200 ա. ո. ի : Եւ այդ ժամանակամիջոցին օտարարտեւտարութեան ապրանքներու ներածման արժէքը 49,963,000 ա. ո. էն ինկուա 46,960,000 ա. ո. ի, մինչդեռ գերման ճարտարարտեւտի արտագրութեանց արտածումը բարձ-

բացաւ 104,935,000 ա. ո. է 115,060,000 ա. ո. Ի. Պէտք է աւելցնենք մինչև 96 Գերմանիոյ բնակիչներուն թիւը 4 միլիոնի չափ աւելցած ըլլալով անոնց ամէն տեսակ պէտքերն ալ հայթայթուած են գերման գործարաններէ: Անգլիոյ արտադուր ի Գերմանիա 1889էն մինչև 96՝ ունեցած է 5,696,000 ա. ո. Ի նուազում մը, սակայն յօգուածագիր մը կ'ըսէ թէ Իրական նուազում մը չէ այդ, զի Գերմանիա այժմ իր պէտք ունեցած հում ապրանքները ուղղակի Անգլիոյ գաղթականութիւններէն ստանալու վրայ է, մինչդեռ առաջ մինչև այժմ ապրանքները Անգլիոյ նաւահանգիստներուն միջոցաւ կը գնէր: Անգլիոյ և Գերմանիոյ իրարու ծախած ապրանքներու արժէքները ցուցնել հետաքրքրական է ու հրահանգիչ (\*). — Գերմանիոյ ներածումը Անգլիայէն, 1889ին 40,780,450 ա. ո., 1896ին 42,842,350 ա. ո.: Անգլիոյ ներածումը Գերմանիայէն, 1889ին 36,004,150 ա. ո., 1896ին 41,164,850 ա. ո.: Տարբերութիւն, 1889ին 4,779,300 ա. ո. 1896ին 1,677,500 ա. ո.:

Ինչպէս կը տեսնուի մինչդեռ 1889ին Անգլիոյ Գերմանիա զրկած ապրանքներուն արժէքը ստացածներէն 4,779,300 ա. ո. աւելի եղած էր, 1896ին այդ առաւելութիւնը ինկած է 1,677,500 անգլ. ոսկիի:

Գերմանիոյ արտաքին վաճառականութեան ընդարձակման պատճառներէն մէկը պէտք է նկատել նաև գերմանական շոգենաւային ընկերութեանց բազմանալը, որոնք ուղղակի կառավարութեան ամէն կերպ գիւրութիւններ ստանալու վրայ են աշխարհի ամենէն հեռաւոր վաճառականական կեդրոններու հետ շարունակական հաղորդակցութիւն մը պահել կարենալու համար:

Գերմանիոյ վաճառականական նաւատորմին արժէքը պէտք է որ 20 միլիոն անգլ. ոսկիէն պակաս չըլլայ այժմ. մինչդեռ 1871ին գերմանական ամբողջ շոգենաւերու տարողութիւնը 81,094 թօնո և արժէքը 1 միլիոն անգլ. ոսկիէն աւելի չէր բնաւ: 1882ին Գերմանիոյ շոգենաւի գործարաններու մէջ աշխատող գործաւորներու թիւն էր 22,500. այդ թիւը 1895ին բարձրացաւ 35,330ի, իսկ 1898ին 50,000ի:

Գերմանիոյ վաճառականութեան այս հսկայաբայլ յառաջադիմութեան արդիւնքները տակաւին զգալի եղած չեն Անգլիոյ հրապարակներուն վրայ, որ դեռ աշխարհի չորս կողմերէն եկած անհուն անհամար հրամանները զբաղեալ կը պահեն Անգլիոյ գործարանները, գործաւորները և վաճառականները, սակայն այս ներկայ ընթացքով թերևս ուշ չըլլայ այն թուականը, երբ Անգլիա այլ ևս զարդի աշխարհի առաջնակարգ վաճառականական ազգը ըլլալէ:

Ա. Գ. Արեւելյ

(\* ) Երկու երկիրներու գաղթականութիւնները ալ միասին առնելով:

### Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու դիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապտէլ-Աչիզի սկիզբը Պ. ԿԱՐՍՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գրք-Պէյ փողոցի ծայրը և թըրամվէյներու կայարանին մօտ ծխափաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵԱՆԻ քով:

### Ա Ջ Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խանութը ի Շարա Ապտէլ-Աչիզ:

### Օ Ր Ա Ց Ո Յ Ց ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ 1901 ՏԱՐԻՈՅ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՓՐԿՉԻ ԱՋԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

### ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ ՊԱՏԿՆԵՐԱՋԱՐԳ

Նրջակայ գիւղերէն եկած յանձնարարութիւնը փութով կը կատարուին Դիմել վերոյիշեալ հասցէին:

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միութիւն» — Թ. Ս. Փափագեանի

### ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԿ ԵԳԻՊՏՈՍԻ

### Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Հիմնի հանրաժանութի գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վաստակութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Հիմնի բաղադրատուութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդարդի համաձայն, պիտի կատարէ Պանգ Հիմնիցի միջոցաւ ամեն տեսակ գրամական և Գրք-Պէյ փողոցի ծայրը և թըրամվէյներու գրք-Պէյ փողոցի ծայրը մը ինչպիսիք թեմամբ ձեռք կը բերուի քիչ առնէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմել Նիւպոսի վրայ փաստարան Ռաբթարի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ լըր-կել հետեւալ հասցէին:

### Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

### ԱՏԱՆԱԲՈՅԹ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակույի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

### ՊԵՆԱԵԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱԿԱՆԵՐ

ԱՐԱՆ ԵՒ ՏԻԿԱՆՆԵՐ

ԵՒ ՁԵՒԱԴԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիբի մեծ պողոտայի վրայ Տայիւայի Սանիյի դիմացը, նախկին Ելիկոսկան գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք դոհացնել մեզ գիմոյ Պաս. յաճախորդները, գործի մաքրութեան, գինիներու չափաւորութեան և ճշգրտահաշիւութեան կողմէն:

Մեր գործատեւընք մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեւընք:

### ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապտէլ-Աչիզ

Նիւո-Տիւրքիսի յեղաւրանին դիմացը:

Օգտաւն ու զուրեակի գիրք մաքուր ու վայելչ սպաս. համեղ ու անդարար կերակուրներու զանազանութիւն, անխաղախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը գիւրամասշի գինիներով ահա՛ Գահիրէ եւ Եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

### Տ Պ Ա Ր Ա Ն



### Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՍ 8

### ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

### ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տարանին մէջ կը սպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրիւններ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն ինքնուրիշ և ճաշակատու սպագրութեամբ:

### ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ